ՀՏԴ : 281.6(091)

Doi:10.54503/0135-0536-2025.2-289

ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի քարե տարեգրությունը, խմբ.՝ Գ. Սարգսյան, *Երևան, Հեղ. հրատ., 2025, 160 էջ*:*

Բանալի բառեր՝ Մայր տաճար, Սբ Էջմիածին, կաթողիկոս, վիմագիր, գրաֆիտային հիշատակագրություն, ուխտավոր-նվիրատու, տարեգրություն:

Մայր տաճարի վիմագրերը, թեև ոչ ամբողջական ընդգրկմամբ, վաղուց ի վեր եղել են հայագետների ուշադրության կիզակետում: Դրանցից մի քանիսը տեղ են գտել դեռևս XIX դարի և նախորդ դարասկզբի տեղագրական-նկարագրական բնույթի աշխատություններում[1]:



Մայր տաճարի և, ընդհանրապես, Վաղարշապատի վանքերի վիմագրական ժառանգության ուսումնասիրությամբ բազմաթիվ աշխատանք են կատարել Ս. Սաղումյանն[2] ու Վ. Հարությունյանը[3]: Խնդրո առարկային անդրադարձումներ ունեն նաև օտարազգի ուսումնասիրողներից Մ. Բրոսսեն[4], Յո. Ստրժիգովսկին[5]:

«Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի քարե տարեգրությանը» ուսումնասիրմանը լրացնելու են գալիս պ. գ. թ., ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող Արսեն Հարությունյանի ուսումնասիրությունները, որոնց առհավատչյան 2016 թ. Մայր Աթոռ Սբ Էջմիածնի կողմից հրատարակված «Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները» խորագրով մենագրությունն է: Գիրքը հրատարակության է երաշխավորվել ԳԱԱ

---

* *Ներկայացվել է 15. XII. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

[1] *Յ ո վ հ ա ն ն է ս ե պ ի ս. Շ ա հ խ ա թ ո ւ ն ե ա ն ց. Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրությամբ՝ Ա. Տեր-Ստեփանյանի, Սբ Էջմիածին, 2014, Ղ. Ա լ ի շ ա ն. Այրարատ. Բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ-Սբ Ղազար, 1890, Ս. Է փ ր ի կ ե ա ն. Էջմիածին (303–1903). պատկերազարդ նկարագրութիւն, Վենետիկ-Սբ Ղազար, 1903:*

[2] *Ս. Ս ա ղ ո ւ մ յ ա ն. Երբ և ովքեր են կառուցել Էջմիածնի Մայր տաճարի զանգակատունը.– «Էջմիածին», 1976, թիվ Ը, էջ 25–33:*

[3] *Վ. Յ ա ր ո ւ թ ի ւ ն ե ա ն. Եկայք չինեսցուք, Սբ Էջմիածին, 1988:*

[4] *Մարի Բրոսսեի՝ Սբ Էջմիածնի Մայր տաճարի ճարտարապետական կառույցի և որմնանկարների մասին առավել մանրամասն տե՛ս Ա. Դ ո լ ո ւ խ ա ն յ ա ն. Մարի Բրոսսեն հայագետ, Երևան, 2002:*

[5] J. S t r z y g o w s k i. Das Etchmiadzin – Evangeliar, Beitrage zur geschighte der Armenischen, Ravennatischen und Syro-Agyptischen Kunst. Wien, 1891, pp. 6–9.

հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Մաշտոցյան Մատենադարանի գիտական խորհուրդների որոշմամբ: Աշխատության խմբագիրն է պ. գ. թ., հնագիտության և ազգագրության ինստիտուտի վիմագրության բաժնի ավագ գիտաշխատող Գագիկ Սարգսյանը:

Նախորդի տրամաբանական շարունակությունն ու ամփոփումն է նաև գրախոսվող աշխատությունը, ուր համահավաք և ժամանակագրական կարգով ներկայացված է Մայր տաճարի վիմագրական ժառանգությունը՝ սկսած վաղմիջնադարյան հունարեն վիմագրերից մինչև վերջին ժամանակների նորոգչական աշխատանքների արդյունքում ի հայտ եկած XVII–XVIII դդ. գրաֆիտային հիշատակագրությունները (175 միավոր): Գրքում վիմագիր սկզբնաղբյուրների հենքով ներկայացվում են Մայր եկեղեցու շինարարական և նորոգման փուլերը, հայ առաքելական եկեղեցու գահակալների եկեղեցաշեն գործունեությունը, ուխտավոր-նվիրատուների անվերապահ հավատն առ Սբ Էջմիածին:

Հեղինակի ուշադրության կիզակետում են նաև Մայր տաճարի՝ քրիստոնեությունը խորհրդանշող յուրօրինակ քանդակային-հորինվածքային լուծումներն ու հունարեն վիմագրերը (էջ 16–21), տաճարի շինարարական աշխատանքների մեկնարկը, տարբեր դարերով թվագրվող հիշատակագրությունները, որոնք թեև բովանդակային խորությամբ աչքի չեն ընկնում, բայց և էապես կարևորվում են տաճարի՝ տվյալ ժամանակահատվածում գործելու և նվիրատվություններ ստանալու տեսանկյունից (էջ 22–26): Միածնաէջ տաճարի նորոգմանը և բարեզարդմանը վերաբերող փաստերը փաստագրվում են նաև ժամանակի պատմագիրների, շնորհաշատ գրիչների ձեռագիր մատյանների հիշատակարաններով: Նշվում է, որ դեպքերի ժամանակակից պատմագիր Առաքել Դավրիժեցին Սբ Էջմիածնի նորոգման աշխատանքների սկիզբ է համարում Հայոց ՌՀԶ (1627) թվականը (էջ 25):

Գրքում ներկայացվում են նաև մեծ զանգակատան կառուցումն ու գմբեթի նորոգումը (էջ 27–40): Նշվում է, որ զանգակատան միջնահարկի ճակտոնները հարդարված են պատկերաքանդակներով. դրանցից երեքին ագուցված են Քրիստոսի, Սբ Գրիգոր Լուսավորչի, Սբ Տրդատի պատկերաքանդակները՝ կից գրություններով: Հեղինակային հիմնավոր դրույթներն ու եզրահանգումները զուգորդվում են գունավոր նկարներով և աղյուսակներով:

Ուսումնասիրության մեջ հետաքրքրական դիտարկումներ կան Մայր տաճարի XVII դ. վերջին տանամյակների և XVIII դ. նորոգման ու որմնանկարազարդման աշխատանքների վերաբերյալ (էջ 41–56), որոնց արձանագրություններից պարզվում են ժամանակի կաթողիկոսների (Ղուկաս Ա Կարնեցի, Սիմեոն Ա Երևանցի, Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի) գործունեության մանրամասները, նրանց նախաձեռնած շինարարական աշխատանքների ծավալները, որոնք ամրագրվել են նաև վիմագրերով:

«Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի քարե տարեգրությունը» աշխատությունում ներկայացվում են Մայր տաճարի բարենորոգչական աշխատանքներին վերաբերող վավերագրերը XIX–XXI դդ. (էջ 57–68): Հանրագիտարանային մանրակրկիտ տվյալներով ներկայացվում են ժամանակաշրջանի բարենորոգչական աշխատանքների ընթացքը, արձանագիր քարերից մեջբերումները, բազմաշխատ հայրապետների սրտացավությունն ու նվիրումը: Ուշագրավ գիտական բացահայտումների հիմնապատկերին ներկայացվում են նաև Մայր տաճարի՝

Գարեգին Բ Վեհափառ հայրապետի տնօրինությամբ սկսած հիմնանորոգման լայնածավալ աշխատանքները:

Ուշարժան է նաև աշխատանքի վերջին հատվածը՝ «Մայր տաճարի գմբեթի թմբուկի նորահայտ գրաֆիտային հիշատակագրությունները» (էջ 69–104) խորագրով, որոնք, ըստ էության, գեղարվեստական վավերագրության ժանրատիրույթում են: Առանձնակի ներկայացված այս հիշատակություններն ուղղակիորեն պարզում են, որ վիմագիր աղբյուրները նորահայտ հուշ-վկայություններ են ժամանակաշրջանի տարբեր իրողությունների վերաբերյալ: Խնդրո առարկա վիմագրերը խոսուն վկայություններ են Սբ Էջմիածնի Մայր տաճարի քարե տարեգրության:

Մեծ է սույն աշխատության գիտական հենքը. ծավալուն ծանոթագրություններ, պատկերացանկ, անձնանունների, տեղանունների առարկայական ցանկեր, օգտագործված հարուստ գրականություն, որոնք նոր լույս են սփռում գրքի գիտական հիմնադրույթներին: Նշելի է, որ վիմագրերն ուղեկցվում են նաև գրչանկարներով. դրանք տեղորոշված են նաև տաճարի ծավալային գծապատկերներում (էջ 105–112): Գրքի վերջում ողջ նյութն ամփոփված է երկլեզու (հայերեն և անգլերեն) տարեգրության տեսքով, ինչն այս աշխատության առանցքային կողմն է: Շահեկան կլիներ գիրքն ունենար ռուսերեն ամփոփում:

Փաստելի է, որ մանրակրկիտ և լուրջ աշխատանք է իրականացված: Ա. Հարությունյանի՝ հանրագիտարանային արժեք ունեցող պատկերազարդ սույն աշխատանքը, որ նվիրվում է Մայր տաճարի վերաօծմանը, արժանի է գնահատանքի:

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ

Բ. գ. դ., պրոֆ., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, Գևորգյան հոգևոր ճեմարանի դասախոս: Գիտական հետաքրքրությունները՝ մշակութային ժառանգություն, տեքստի ոճաբանություն և խոսքի զարգացման հիմնախնդիրներ, հաղորդակցական իրավիճակների մեթոդաբանություն: Հեղինակ է 4 և համահեղինակ 10 գրքերի, շուրջ 150 հոդվածի: ORCID: 0000-0001-9506-8611. galstyanashot42@aspu.am